ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՈՒԴ- ԳՀԱՇՁԲ -20/7

ք.Գյումրի

«29»ապրիլի 2020թ.

«Շինարար-97»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է «Շինարար-97»ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Վալերիկ Շիրինյանի, որը գործում է «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ-ի ռենգենյան բաժանմունքի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետովնախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչևայլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ---------- օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

---

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻԳԻՆԸԵՎՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5 652 161 (հինգ միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հարյուր վաթսունմեկ) ՀՀդրամ, որից 942 027 (ինը հարյուր քառասուներկու հազար քսանյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 5652161 (հինգ միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հարյուր վաթսունմեկ) ՀՀդրամ՝ որից 942027 (ինը հարյուր քառասուներկու հազար քսանյոթ) ՀՀդրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսիչափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ	«Շինարար-97»ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա	Հասցե՝ ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ », Գյումրիի մ/ճ	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ » Շիրակ մ/ճ
Հ/Հ 163128117476	Հ/Հ 163527033183
ՀՎՀՀ 05502356	ՀՎՀՀ 05510886
oncodisp68@gmail.com	hovhannes.aharonyan@gmail.com
Հեռ. (0312) 3-49-50	Հեռ. (093) 03-03-66
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«29» ապրիլի 2020թ. կնքված
ԳՈՒԴ- ԳՀԱՇՁԲ -20/7*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ-ի ռենտգենային բաժանմունքի վերանորոգման » աշխատանքների կատարման

N/N	Աշխատանքների և ծախսերի շիֆրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
		Միջնորմներ				
1	46--88	Խալխլված միջնորմների քանդում	քառ.մ	8	0.606	4.848
		Ընդամենը				4.848
		Դռներ				
1	46--124	Փայտից դռների ապամոնտաժում	քառ.մ	25.06	0.875	21.928
		Ընդամենը				21.928
		Հատակներ				
1	46--119	Հատակների ցեմ ավազե հարթեցնող շերտի քանդում	քառ.մ	48	0.27	12.960
2	46--109	Խեցեգործական սալիկներից հատակների քանդում	քառ.մ	0.15	0.317	0.048
3	46--121	Լինոլեումի քանդում	քառ.մ	163.7	0.107	17.516
		Ընդամենը				30.523
		Ներքին հարդարում				
1	ռ11--80	Պատերի և առաստաղի վրայից ներկի քերում	քառ.մ	602.53	0.202	121.711
2	34--31 գ-0,36	Ա/ցեմենտե ալիքավոր թերթերից կախովի առաստաղի ապամոնտաժում պողպատե /50*50*5մմ//անկյունակների հետ միասին /վերադարձ պատվիրատուին/	քառ.մ	164	0.407	66.748
3	10-- 34 գ-0,5	Պատերի փայտյա երեսապատումների քանդում /վերադարձ պատվիրատուին/	քառ.մ	4.8	0.239	1.147
		Ընդամենը				189.606
		Այլ աշխատանքներ				
1	23--226	Շինարարական աղբի բարձում ավտոինքնաթափերի վրա ձեռքով	տ	9	0.26	2.340
2	շուկա	Շին աղբի տեղափոխում 7կմ	տ	9	1.311	11.799
3	1-1605	Աշխատանք աղբակույտի վրա	խոր.մ	5	0.029	0.145
		Ընդամենը				14.284
		Ընդհանուրը				261.189
		Վերանորոգման աշխատանքներ				
		Պատեր				

1	9--14	Ծածկերի տակ հենակների տեղադրում տաշտապողպատից 16	տ	0.25	47	11.750
2		Պողպատե կոնստրուկցիաների արժեքը	տ	0.25	405.973	101.493
3	46--80	Խալխլված պատերի քանդում	խոր.մ	9.08	5.872	53.318
4	8--50	Պատերի շարք սրբատաշ տուֆ քարով	քառ.մ	19.8	20.892	413.662
5	8--161	Տուֆ քարե միդիս շարք	խոր.մ	7.72	26.31	203.113
6	08--59	Շարվածքի ամրանավորում ցանցով	տ	0.05	394.754	19.738
		Ընդամենը				803.074
		Միջնորմներ				
1	8--169	Թեթև բետոնե սալերից միջնորմների իրականացում 10*20*40սմ հաստ /օդափոխ.հորանի համար/	քառ.մ	9	3.297	29.673
2	8--150	Անցքերի լցափակում թեթև բետոնով B 15դասի	խոր.մ	0.315	25.46	8.020
3	06--86	Միջադիր էլեմենտների տեղադրում	տ	0.030	588.245	17.647
		Ընդամենը				55.340
		Պատուհաններ				
1	n7--25	Փայտե պատուհանների փեղկերի վերանորոգում	հատ	22.00	4.401	96.822
2	n15--21	Պատուհանների ապակիների փոխարինում	քառ.մ	20.54	4.334	89.020
3	n7--51	Պատուհանագոգերի փոխարինում	քառ.մ	6.75	3.078	20.777
4		Պատուհանագոգ պլաստմասե 0,45մ լայն	գծ,մ	15.00	3.374	50.610
5	n14--154	Պատուհանների լավորակ յուղաներկում 2անգամ հինը քերելով	քառ.մ	51.35	0.909	46.677
		Ընդամենը				303.906
		Դռներ				
1		Ալյումինե արտաքին դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/Դ-1,2	քառ.մ	2.97	57.821	171.728
2		Սպիտակ մետաղապլաստե դռան տեղադրում 60մմ պրոֆիլով /տեղափխումը և տեղադրումը ներառված է գի մեջ/	քառ.մ	22.09	27.374	604.692
		Ընդամենը				776.420
		Հատակներ				
1	11-55 11--56	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստութ.	քառ.մ	48.00	0.873	41.904
1	18--11	Բիտումի քսուկի վրա տոլով ջրամեկուսացման իրականացում 1 շերտ	քառ.մ	6.30	2.72	17.136
2	11-135	Հատակի պատում խեցեգործական սալիկներով սան.հանգուցներում 30*30մմ	քառ.մ	6.30	6.319	39.810
4	11--205	Լավորակ լինոլեումե հատակի ծածկույթի իրականացում	քառ.մ	155.00	2.642	409.510
		Ընդամենը				508.360
		Ներքին հարդարում				

1	ռ11--57	Պատերի գաջե սվաղի վերանորոգում	քառ.մ	45.00	1.458	65.610
2	ռ11--64	Նույնը առաստաղի համար	քառ.մ	12.50	0.301	3.763
3	15-256	Խոնավ հատվածներում և սան հանգույցների պատերի լավորակ սվաղ ցեմ.-ավազ. շաղախով	քառ.մ	0.23	1.244	0.286
4	15-84	Սան.հանգույցներում պատերի երեսապատում խեցեսալիկներով	քառ.մ	23.00	4.285	98.555
5	15-660	Պատերի, շեպությունների լավորակ ներկում լատեքսաներկով	քառ.մ	131.55	0.616	81.035
6	15-661	Առաստաղների լավ որակ ներկում լատեքսաներկով	քառ.մ	157.40	0.706	111.124
7	34--389	Օդափոխության խողովակների երեսապատում պլաստմասե ծողերով	քառ.մ	1.60	5.452	8.723
8	34--389	Պլաստմասեծողերով կախովի առաստաղի իրականացում	քառ.մ	6.30	5.452	34.348
		Ընդամենը				403.444
		Ընդհանուրը				2850.543
		Սան.տեխնիկական աշխատանքներ				
		Ջեռուցում				
1	ռ17--140	Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում d=20մմ	հատ	2	0.709	1.418
2	19--1	Ջեռուցման խողովակների ապամոնտաժում	գծ.մ	18	0.245	4.410
3	16--261	Ջրաամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ d=20*2,8մմ փորձարկումովտաք ջրի համարմ	գծ.մ	32.00	1.872	59.904
4	16-262	Նույնը, d=25*3,5մմ	գծ.մ	34.00	1.565	53.210
5	ռ17--247	Հանված ջեռուցման մարտկոցների տեղադրում	էկմ	5.22	0.492	2.568
6	18-115	Ալյումինե ջեռուցման մարտկոցների մոնտաժում H=500	էկմ	11.30	0.384	4.339
7		Ալյումինե սեկցիաների արժեքը H=500մմ	սեկ ցիա	39.0	4.921	191.919
8	16--134	Փական կցորդչային d=15մմ	հատ	16.00	3.562	56.992
9	16--134	Արտաթողման ծորակ d=15մմ	հատ	2.00	3.277	6.554
10	18--229	Օդահան ծորակ մարտկոցների վրա d=15մմ	հատ	8.00	0.357	2.856
11		Խողովակների անցումներ մետաղ-պլաստ d=15մմ	հատ	18.00	0.494	8.892
12		Ձևավոր մասեր d=20-25մմ	հատ	30.00	0.079	2.370
		Ընդամենը				395.432
		Շին աշխատանքներ				
1		Ջեռուցման մարտկոցների կախիչներ դյուբելների հետ միասին	հատ	16.00	1.185	18.960
2		Պլաստմասե ամրակներ խողովակների ամրացման համար դյուբելների հետ միասին d=20-25մմ	հատ	150.00	0.015	2.250
3	46--50	Գոյություն ունեցող պատերի մեջ անցքերի բացում և վերականգնում	հատ	2.00	3.468	6.936
4	46--54	Միջնորմների մեջ անցքերի բացում	հատ	6	0.47	2.820

5	16--35	Պատյան d=32մմ	գծ.մ	2	0.852	1.704
		Ընդամենը				32.670
		Ընդհանուրը				428.102
		Օդափոխություն				
1	16--34	Պլաստմաս եխողովակ օդափոխության համար d=150մմ	գծ.մ	4	1.787	7.148
2	20--735	Առանցքայինօդափոխիչների տեղադրում	հատ	2	3.6	7.200
3		Առանցքային օդափոխիչ VENTS 120խոր.մ/ժամ 0,1կվտ	հատ	1	2.119	2.119
4		Առանցքային օդափոխիչ VENTS 120խոր.մ/ժամ 0,1կվտ	հատ	1	2.966	2.966
5		Ե/բ պատերի մեջ անցքերի բացում d=160մմ 50սմ հաստ	հատ	2	0.353	0.706
		Ընդամենը				20.139
		Ընդհանուրը				20.139
		Ջրամատակարարարում /սառը և տաք/				
		Սան.տեխ.աշխատանքներ				
1	16--261 գ-0,4	Ջրամատակարարման պոլիպրոպիլենե խողովակների ապամոնտաժում /d=15մմ փորձարկումով	գծ.մ	3	0.677	2.031
2	16--261	Ջրամատակարարման պոլիպրոպիլենե խողովակներ /d=20մմ փորձարկումով	գծ.մ	13	1.872	24.336
3	16-134	Փական գնդիկավոր d=15մմ	հատ	3	2.92	8.760
4	17--52	Լվացարանի ծորակ /լավորակ/	հատ	1	4.567	4.567
5		Ճկախողովակ	հատ	2	0.593	1.186
6		Պոլիպրոպիլենե անկյունակ	հատ	6	0.048	0.288
7		Պոլիպրոպիլենե եռաբաշխիկ	հատ	2	0.079	0.158
8		Խողովակների անցումներ մետաղ/պլաստ d=20մ	հատ	6	0.494	2.964
9		Խողովակների ամրացման մասեր/ ամրակներ/	հատ	40	0.02	0.800
		Ընդամենը				45.090
		Շին աշխատանքներ				
1	46--54	Միջնորմների մեջ անցքերի բացում	հատ	3	0.47	1.410
2	16--35	Պատյան d=32մմ	գծ.մ	0.6	0.852	0.511
		Ընդամենը				1.921
		Ընդհանուրը				47.011
		Կոյուղի				
		Հողային աշխատանքներ				
1	1--961	III կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	7.5	1.59	11.925
2	23--226 310-7	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ա/ինքնաթափերիվրա տեղափոխելով 7կմ	տ	0.9	1.571	1.414
3	1--968	Բնահողի հետլիցք ձեռքով տոփանումով	մ^3	6.5	0.665	4.323
		Ընդամենը				17.661
		Սան.տեխ աշխատանքներ				
1	23-1	Ավազից նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ	մ^3	0.7	3.117	2.182

2	16--33	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում D100 հողի մեջ	գծ.մ	10	1.774	17.740
3	16--33	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում D50 հողի մեջ պատի վրայով	գծ.մ	5	0.824	4.120
4	16--35	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում D100 պատի վրայով	գծ.մ	5	1.774	8.870
5	16--33	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում D50 պատի վրայով	գծ.մ	3	0.824	2.472
6	23--155	Միացում գոյություն ունեցող գծին	հատ	2	12.978	25.956
7		Ձևավոր մասերD100	հատ	8	1.767	14.136
8		Ձևավոր մասերD50	հատ	5	0.781	3.905
9	17--59	Ճենապակյա կերամիկական զուգարանակոնքի տեղադրում լվացման տակառիկով /լավորակ/մանկական սիֆոնով և խառնիչով	կ-տ	5	21.962	109.810
10	17--22	Ճենապակյա կերամիկական լվացարանի տեղադրում լավորակ	կ-տ	1	14.998	14.998
11	17--80	Խոհանոցակոնք 2 տեղանոց սիֆոնով	կ-տ	1	26.445	26.445
12	17-36	Հոսակ արծնապատ Tp-50	հատ	1	1.506	1.506
		Ընդամենը				232.140
		Շին աշխատանքներ				
1	46--50	Գոյություն ունեցող հիմքերի մեջ անցքերի բացում և վերականգնում d=160մմ	հատ	1	3.468	3.468
2	46--50	Գոյություն ունեցող հիմքերի մեջ անցքերի բացում և վերականգնում d=200մմ	հատ	1	3.468	3.468
3	22--66	Մետաղական պարկուճ d=100մմ	գծ.մ	0.6	3.09	1.854
4	22--69	Մետաղական պարկուճ d=200մմ	գծ.մ	0.6	10.369	6.221
		Ընդամենը				15.011
		Ընդհանուրը				264.813
		Էլեկտրալուսավորություն				
		Մոնտաժ				
1	8--612-10	Բաշխիչ վահանակի տեղադրում	հատ	1	3.127	3.127
2	8--525-2	Նույնը ավտոմատ անջատիչներ	հատ	12	1.634	19.608
3	8-591-5	Թաքնված լարանցման անջատիչ	100 հատ	0.08	18.731	1.498
4	8-591-7	Թաքնված լարանցման վարդակներ	100 հատ	0.17	18.11	3.079
5	8-593-1	Շիկացման լուսատուներ լուսադիոդային	100 հատ	0.16	159.28	25.485
6	8--148-9	Մալուխի անցկացում պատերով և կոնստրուկցիաներով կոնստրուկցիաների վրայով	100 գծ.մ	0.2	13.507	2.701
7	8-402-2	Թաքնված լարանցում	100 գծ.մ	2	19.018	38.036
		Ընդամենը				93.534
		Նյութեր				
1		Բաշխիչ վահանակ ИЭК ЩЭ	հատ	1	23.03	23.03
2		Ավտոմատ անջատիչ 1*25Ա	հատ	12	1.535	18.42
3		6ա 220վ անջատիչ մեկստեղանի	հատ	8	0.578	4.624
4		Լուսատուներ լուդիոդային LED	հատ	16	6.237	99.792

5		Վարդակ միաֆազ	հատ	16	0.668	10.688
6		Վարդակ եռաֆազ	հատ	1	0.668	0.668
7		ՎՎԳ հատ.1*6քառ.մմ հաղորդալար հողանցման	գծ.մ	20	0.315	6.3
8		Մալուխ ՎՎԳ- 1*6քառ.մ	գծ.մ	20	0.17	3.4
9		Մալուխ ՎՎԳ- 3*1,5քառ.մ	գծ.մ	50	0.17	8.5
10		Մալուխ ՎՎԳ- 3*2,5քառ.մ	գծ.մ	150	0.266	39.9
		Ընդամենը				215.322
		Ընդհանուրը				308.856
	Ընդհանուրը					4180.654
	Չնախատեսված ծախսեր 1,5%					62.710
	Ընդամենը					4243.364
	Շահույթ 11 %					466.770
	Ընդամենը					4710.134
	ԱԱՀ 20 %					942.027
	Ընդամենը					5652.161

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ », Գյումրիի մ/ճ
Հ/Հ 163128117476
ՀՎՀՀ 05502356
oncodisp68@gmail.com

Հեռ. (0312) 3-49-50

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար-97»ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ » Շիրակ մ/ճ
Հ/Հ 163527033183
ՀՎՀՀ 05510886
hovhannes.aharonyan@gmail.com

Հեռ. (093) 03-03-66

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» ապրիլի 2020թ. կնքված
ԳՈՒԴ- ԳՀԱՇՁԲ -20/7*ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆԳՐԱՖԻԿ

«ՌԵՆՏԳԵՆԱՅԻՆԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ռենտգենային բաժանմունքի վերանորոգման աշխատանքներ	**Պայմանագրի կնքման օրից**	01.09.2020

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ », Գյումրիի մ/ճ
Հ/Հ 163128117476
ՀՎՀՀ 05502356
oncodisp68@gmail.com

Հեռ. (0312) 3-49-50

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար-97»ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ » Շիրակ մ/ճ
Հ/Հ 163527033183
ՀՎՀՀ 05510886
hovhannes.aharonyan@gmail.com

Հեռ. (093) 03-03-66

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«29» ապրիլի 2020 թ. կնքված
ԳՈՒԴ- ԳՀԱՇՁԲ -20/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Սեպտեմբեր	հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100	Ռենտգենային բաժանմունքի վերանորոգման աշխատանքներ							2826081	2826081	2826081	5652161	5652161	5652161	5652161

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Վ.Սարգսյան 25ա
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ », Գյումրիի մ/ճ
Հ/Հ 163128117476
ՀՎՀՀ 05502356
oncodisp68@gmail.com

Հեռ. (0312) 3-49-50

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար-97»ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ » Շիրակ մ/ճ
Հ/Հ 163527033183
ՀՎՀՀ 05510886
hovhannes.aharonyan@gmail.com

Հեռ. (093) 03-03-66

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
«29 » ապրիլի 2020թ.կնքված
ԳՈՒԴ- ԳՀԱՇՁԲ -20/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	Անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«29» ապրիլի 2020 թ.կնքված
ԳՈՒԴ- ԳՀԱՇՁԲ -20/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն